

Վարդիթեր Աբրահամյան

X-XI դարերուիս բնութանդիւսի ՁԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՏԵՂԾՎԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ԱԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ

Բանալի բառեր- կատապան, կյուրապաղատ, Բյուզանդիա, Տարոն, Տայք, Վասպուրական, Իբերիա, բնագիծ, տարածք, սահման:

Գրավված երկրներում նվաճողներն օրինաչափորեն առաջին հերթին հաստատում են իրենց հարկային ու վարչական համակարգը: Նվաճված տարածքները ներառելով պետության միասնական վարչաքաղաքական կառուցվածքում նրանք ոչ միայն դյուրացնում են պետական իշխանության տեղական օղակների գործունեությունը, այլ փորձում են ամրապնդել իրենց տիրապետությունն այդ տարածքներում: Այս ընդհանուր օրինաչափությունից դուրս չի մնում նաև Բյուզանդական կայսրությունը, որը 949-1065 թթ. Հայաստանում գավթած տարածքներում, ըստ դրանց գրավման ժամանակագրական կարգի, կազմեց Տարոնի, Վասպուրականի և Իբերիայի¹ կատապանությունները: Հայաստանում Բյուզանդական տիրապետությանը և մասնավորապես քննարկվող հարցին անդրադարձել են շատ ուսումնասիրողներ: Սույն հոդվածի նպատակն է ճշգրտել Հայաստանում բյուզանդացիների կողմից ձևավորած վարչատարածքային միավորների տարածքն ու սահմանները:

Բյուզանդիան, որը երբեք չիրաժարվեց Հայաստանն իր սեփական տարածքը համարելու մտքից, X-XI դդ-ում կիրառելով իրեն բնորոշ «բաժանիր որ տիրես» սկզբունքը, ահաբեկումն ու բացահայտ ագրեսիան գրավեց Հայաստանի տարածքի մեծ մասը²: Գրավված տարածքներում համաձայն կայսրության վարչատարածքային բաժանման սկզբունքների՝ կազմավորվում են ռազմավարչական շրջաններ՝ բանակաթեմեր, որոնց կառավարիչները երբեմն կրում են կատապան տիտղոսը: Այս տիտղոսը բյուզանդական աղբյուրներում հանդիպում է IX-XI դդ. և սկզբում նշանակում էր մի որոշակի ծառայության վերակացու: Ինչպես դուքսերը, այնպես էլ կատապանները զորահրամանատարներ էին, իսկ X դարից նրանք դառնում են նաև սահմանային ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բանակաթեմերի առաջնորդներ՝ ունենալով թե՛ ռազմական, թե՛ վարչական իշխանություն: XI դարից կատապան և դուքս տիտղոսները նույն ֆունկցիաներն ունեին և նույնիսկ նույն անձնավորությունը կարող էր այդ երկու տիտղոսներով էլ հիշատակվել³:

Կայսրության առաջին զոհը Բագրատունիների Տարոնի իշխանությունն էր, որը բուն Տարոնից բացի ընդգրկում էր նաև «Աշխարհացոյց»-յան Տուրուբերանի Խութ, Ասպակունիք, Կորի, Վարաժնունիք, Խորխոռունիք գավառները, Արշամունիքի հարավային և Հարք գավառի արևմտյան մասերը, Աղձնիքի Սասուն, Սալնոճոր, Երխեթք, Գզեղխ, գավառները: Տարոնի իշխանության մեջ էր մտնում նաև Ծովքի Հաշտյանք գավառը, որից արևմուտք ընկած Բալախովիտ (Աշմուշատ) գավառը Տարոնի արևմտյան սահմանային գավառն էր: Աշմուշատից հյուսիս Տարոնի իշխանության մաս էին կազմում Խորձյան և Պաղնատուն գավառները, ինչպես նաև Բարձր Հայքի Մանանաղի գավառը, Մուզուր գավառի արևելյան և Եկեղյաց գավառի հարավային ու արևելյան մասերը⁴:

Բյուզանդիայի միջամտությամբ Տարոնի Բագրատունիների իշխանությունը նախ մասնատվեց, որից հետո իշխան Աշոտը ոչ առանց Բյուզանդիայի ճնշման՝ Տարոնը

¹ 1045թ-ից Հայաստանի և Իբերիայի կատապանություն:

² Տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ-ում, «ԼՀԳ», № 2, 1996:

³ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ.10, «Բյուզանդական աղբյուրներ», Հովհաննես Սկիլիցես, ծանոթագրություններ, թարգմ. Հ. Բարթիկյան, Ե., 1979, էջ 337:

⁴ Տե՛ս Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908թթ), Ե., 2011, էջ 100:

կտակեց կայսրությանը, ապա իշխան Աշոտին թունավորելուց հետո կայսրությունը երկրամասը նվաճեց¹: Սակայն այդ ժամանակ՝ 968 թ.², նվաճվեց Տարոնի միայն մի մասը: 974 թվ. Բյուզանդիայի նոր կայսր Հովհաննես Չմշկիկը հսկայական զորքով հասավ Տարոն, բանակ դրեց Մշո Այծյաց բերդի առջև, որը գրավել չկարողացավ³: Ինչպես երևում է, կայսրը կանգ էր առել այնտեղ, որտեղ վերջանում էին բյուզանդական տիրույթները: Տարոնի մնացած մասը (բացառությամբ Սասունի) կայսրությանն անցավ Վարդ Փոկասի ապստամբությունը (976-979թթ) ճնշելուց հետո: Ամենայն հավանականությամբ ապստամբության ժամանակ վերջինիս կողմն էին անցել նաև Տարոնի մնացած մասի իշխանները⁴: Ստեփանոս Ասողիկը հիշատակում է այն ճանապարհը, որով անցել էր կայսրը 1001 թ. Տայքի կյուրապաղատ Դավթի հողերին տիրանալու համար: Դրանք այն տարածքներն էին, որոնք ավելի վաղ անցել էին կայսրությանը. «Եւ անցեալ թագաւորն ընդ Հանձիթ եւ ընդ Բալու՝ ելանէ ի լեառն Կոհերայ յաւուր Վարդավառի տօնին, որ ընդ մեջ Հաշտենից, Ծոփաց եւ Խորձենոյ. Եւ անդուստ գայ, հասանէ ի գաւառն Արշամունեաց, ի քաղաքն Երիզայ: ...Եւ ինքն չուեալ հասանէ ի լեառն Հաւձիչ, ի քաղաքն յայն: ...Եւ ինքն չուեալ անցանէ ի գաւառն Հարք, ի Մանազկերտ քաղաք»⁵: Վկայությունից երևում է, որ Տարոնի իշխանությունն ամբողջովին ենթակա էր կայսրությանը:

Նվաճումից հետո Տարոնը վերածվեց բյուզանդական բանակաթեմի: Ըստ որոշ ուսումնասիրողների Տարոնը եւ Դերջանը միավորված էին մեկ բանակաթեմում⁶: Այս տեսակետը հիմնավորվում է Ստեփանոս Ասողիկից քաղած այն տեղեկությամբ, որ Վարդ Փոկասի մահից հետո նրա կողմնակիցներից մագիստրոս Չորտվանելը տիրեց Տարոնին ու Դերջանին⁷: Սակայն Աշոտին ուղղված Հովհաննես Չմշկիկի նամակում Տարոնը և Դերջանը հիշատակվում են որպես առանձին թեմեր. «Յանափոռտէն պռտաւսպարին Դերջանայ, Լեւոնի և Տարօնոյ զօրավարին ողջոյն և 'ի տէր խնդալ»⁸: Կ. Յուզբաշյանն այն տեսակետն է արտահայտում, որ այլ աղբյուրներում առանձին են հիշատակվում Տարոնի ստրատեգը և Դերջանի ստրատեգը⁹:

Բյուզանդիայի կողմից ձևավորած Տարոնի կատապանությունից դուրս մնաց Սասունի իշխանությունը, որը բացի բուն Սասուն գավառից ընդգրկում էր նաև Խուրթ, Սալնոձոր, Երխեթք, Գզեղխ, Ասպակունիք գավառները: Մանանաղի գավառը նույնպես Տարոնի կատապանությունից անջատվեց և միացվեց Դերջանին, քանի որ Դերջանը և Մանանաղին բնաշխարհագրական, ինչպես նաև հետագա վարչական բաժանումների տեսանկյունից, կապված են միմյանց¹⁰: Այսպիսով Տարոնի կատապանության մաս էին կազմում Ծոփքի Բալահովիտ, Պաղնատուն, Խորձյան, Հաշտյանք և Տուրուբերանի Տարոն, Աշմունիք (Արշամունիք), Վարաժնունիք, Խորխոռունիք, Հարք, Կորի գավառները: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ սահմանները հիմնականում անց են կացվում որոշակի բնագծով, ապա Տարոնի կատապանությունը բաժանվում էր արևմուտքում Բյուզանդական Միջագետք բանակաթեմից Խորձյան և Պաղնատուն գավառների արևմտյան սահմանը կազմող Սուրբ լույսի լեռներով և Մուզուր (Մնձուր) գետի միջին ու ստորին հոսանքով, Բալահովիտ գավառը հարավից և Սասունի իշխանությունը հյուսիսից եզերող Հայկական Տավրոսի լեռներով, արևելքում՝ Վասպուրականի թագավորույթ-

¹ Տե՛ս «Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցոյ», Փարիզ, 1859, էջ 170: Հովհաննես Սկիլիցես, էջ 28:

² Տե՛ս Գրիգորյան Գ., Տարոնի իշխանության քաղաքական վիճակը (IX դարի վերջ-X դարի 60-ական թթ), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 6, 1980թ, էջ 72:

³ Տե՛ս «Պատմութիւն Մատթէոսի Ուռնայեցոյ», Յերուսաղէմ, 1869, էջ 21:

⁴ Տե՛ս Դանիելյան Է., Թռռնիկյանների քաղաքական դերը X դարում հայ-բյուզանդական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 10, էջ 71:

⁵ Տե՛ս Ասողիկ, էջ 268-270:

⁶ Տե՛ս Արոնց Ն., Երկեր, հ. Ե, Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Ե., 2012, էջ 368:

⁷ Տե՛ս Ասողիկ, էջ 243

⁸ Տե՛մս Մ ատթէոս Ուռնայեցի, էջ 33:

⁹ Տե՛ս Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия в IX-XI вв, М., 1988, с. 176.

¹⁰ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 2001, էջ 106:

յունից (ավելի ուշ կատապանությունից) Բզնունյաց լեռներով, հյուսիս արևելքում և հյուսիսում Անիի թագավորությունից ու Տայքի կյուրապաղատության (ավելի ուշ՝ Իբերիայի կատապանություն ասած Հայաստանի և Իբերիայի կատապանություն) հողերից Արածանիի աջակողմյան վտակներից Տուարածաջուր և Դալար գետերի ջրբաժանով ու Բյուրակնի լեռներից սկիզբ առնող ու Խնուսի դաշտը հյուսիսից եզերող լեռնաձյուղով:

1021 թ. Բյուզանդիան նվաճեց Վասպուրականը¹: Ստեղծվեց համանուն կատապանությունը, որն ընդգրկում էր Վասպուրականի թագավորության հիմնական մասը:

Սենեքերիմ Արծրունու կառավարման շրջանում Վասպուրականի թագավորությունը բավականին ընդարձակ տարածք է ունեցել: Սամվել Անեցու վկայությամբ Վասպուրականի թագավորությունն ուներ. «ՃԾԵ. Վանք և ոմանք ԹՃ. Վանք ասեն, իսկ երկիրն զոր էառ Վասիլն էին ՀԲ. Բերդս և ԴՌ. գիւղս Ո. քաղաք»²: Մի «Յասմաուրք»-ում, պատմելով Վասպուրականի թագավորությունից Բյուզանդիային անցած շրջանների մասին, նշվում է. «Եւ Սենեքերիմ ետ կայսերն զկալուածս իւր, բերդս. ՀԲ., գիւղս. ԳՌ. Եւ. Ն. լայնանիստ եւ արդինաւոր. Եւ քաղաքս. Ժ. գխլաթ, գՓողց, գՀիզան, եւ գԿեցան, գՈստան, եւ գՎան, գԲերկրի եւ գԱրձէշ, գԱրծկէ եւ գՄանծկերտ, եւ զբոլոր թումանս Խլաթայ, ի լերանցն Սասնոյ, մինչեւ ի Սեւան եւ ի Նըւան, ի Սալմաստ եւ ի Ջղմար, որ է Ջուլամէրկ»³:

Անդրադառնալով Արծրունիներին ենթակա տարածքներին Վ. Հարությունովա-Ֆիդանյանը, վկայակոչելով կարծեցյալ Շապուհ Բագրատունուն գրում է, որ Փողցը, Հիզանն ու Կեցանը Մոկքի քաղաքներն են, որոնց իշխողները Վասպուրականի իշխանների վասալներն էին, Վանն ու Ոստանը Վասպուրականի քաղաքներն են, իսկ Սևան ու Նկան ամրոցները վաղուց պատկանում էին Արծրունիներին: Ինչ վերաբերում է Մանազկերտին, նա այն կարծիքն է հայտնում, որ «Յասմաուրք»-ում հիշատակվող Մանազկերտը փոքր քաղաք էր, որը գտնվում էր Վասպուրականի Ոչտունիք գավառում՝ Աղթամարի դիմաց⁴:

Այս տեսակետն անընդունելի է, քանի որ Ոչտունիք գավառի տարածքն ամբողջությամբ ի սկզբանե ենթակա էր Արծրունիներին: Իրականում, ըստ աղբյուրների Բյուզանդիայի կողմից 1001թ Վասպուրականի թագավորությանն է տրվել Հարք գավառի Մանազկերտ քաղաքը, Խլաթը, Արձեշը, Արծկեն ու Բերկրին իրենց ենթարկելու իրավունքը: Արծրունիներն, ամենայն հավանականությամբ, բավարարվել էին վերջիններիս կողմից իրենց գերիշխանության ճանաչմամբ:

Կոստանդին Ծիրանածինը գրում է, որ. «Իշխանաց իշխանը (իմա՝ Աշոտ Ա-Վ.Ա.)... տիրում էր նաև Խերտին և Սալմաստին»⁵: Սակայն Հերում և Սալմաստում հաստատվել էին մահմեդականներ, ու դրանք անցել էին Ատրպատականի իշխողների տիրապետության տակ: Այս քաղաքական կացությունն են արձանագրում Իբն ալ-Ասիրը և Յակուտ ալ-Համավին⁶:

Տարբեր քաղաքական անցքերի կապակցությամբ Թովմա Արծրունին որպես Արծրունիներին ենթակա տարածք է հիշատակում Ջլմարը⁷:

Վասպուրականի թագավորության տարածքի հողերի մի մասը ուղղակիորեն պատկանում էր Արծրունիներին, մյուս մասը՝ նրանցից կախման մեջ էր (Մոկք, Անձևա-

¹ Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 21; «Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Ա. Էջմիածին, 1893, էջ 104; Հովհաննես Սկիլիցես, էջ 86:

² Տե՛ս Սամուէլ Անեցի, էջ 104

³ Տե՛ս Տաշեան Հ., Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 100:

⁴ Տե՛ս Арутюнова-Фиданян В., Фема Васпуракан (территориальный состав), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 9, էջ 92-99:

⁵ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 6, «Բյուզանդական աղբյուրներ», հ. Բ.: Կոստանդին Ծիրանածին, Ե., 1970, էջ 10:

⁶ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն Ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 185, 207, 217 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ.3, «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Նալբանդյան, Ե., 1965, էջ 62, 76:

⁷ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, թարգմ. Վ. Վարդանյանի, Ե., 1985, էջ 307, 390, 432:

ցիք), իսկ մնացյալը՝ ձևականորեն ընդունում էին նրանց սյուզերենությունը (Սասուն)¹: Այսպիսով Սենեքերիմը Բյուզանդիային կարող էր զիջել իր հողերը, բայց ոչ իրենից վասալական կախվածության մեջ գտնվողները: Մոկքի եւ Անձևացիքի տերերը տվել են իրենց համաձայնությունը իրենց տիրույթները Բյուզանդիային տալու վերաբերյալ, մինչդեռ Բերկրիի, Արձեշի և Սասունի տերերը չընդունեցին բյուզանդական գերիշխանությունը²: «Յայսմաւուրք»-ում հիշատակվող տարածքներից Արձեշը 1023-1026թթ Վասպուրականի կատապան Նիկեփոր Կոմնենոսը գրավում է այնտեղ իշխող մահմեդականներից, իսկ մի ուրիշ կատապան՝ Նիկետաս Պեգոնիտեսը 1033-1034 թթ. նվաճում է Բերկրին³: Մրվանյանների ձեռքում են մնում Բաղեշ ու Նփրկերտ քաղաքները, իսկ Սասունը մնում է անառիկ⁴: Յահյա Անտոքացին գրում է. «Վասպուրականի թագավոր Սենեքերիմը զիջեց Վասիլ ցարին իր բոլոր ամրոցները, հողերը և ողջ Վասպուրական երկիրը: Եվ զիջեց առաջինի հարևան Իբն-ալ-Ղայրանին իր բերդերը և ամրոցները և այդ ամբողջը կայսրը միացրեց իր պետությանը: Ամրոցների և բերդերի թիվը հասնում էր քառասունի: Եվ ցարը դրանցից ստեղծեց հատուկ կատապանություն, տեղավորեց այնտեղ զորքեր և նշանակեց կառավարիչներ»⁵:

Այսպիսով Վասպուրականի կատապանության տարածքից դուրս են մնում նախկինում Վասպուրականի թագավորության մաս կազմող Պարսկահայքի հյուսիսային գավառները և Արծրունիների թագավորության ազդեցության ոլորտում գտնվող Սասունի իշխանությունը:

Վասպուրականի կատապանությունը հավանաբար Տարոնի կատապանությունից բաժանված էր Մանազկերտից և Խլաթից արևմուտք ընկած Բզնունյաց լեռներով, Անի-Շիրակի թագավորությանը ենթակա Բագրևանդ, Կոզովիտ ու Ծաղկոտն գավառներից՝ Ծաղկանց լեռների արևելյան հատվածով և նրա շարունակությունը կազմող Թոնդրակի լեռներով, ապա Կոզովիտ գավառն Արտազ գավառից բաժանող Սինոռ (Ջիարեթի) լեռներով, հյուսիս-արևելքում սահմանն անցնում էր Արաքս գետով, արևելքում՝ Վասպուրականի և Կոհ-ի-Նիխորական լեռներով, հարավում և հարավ-արևմուտքում՝ Կորձայքից, Անձևացիքից և Մոկքից հարավ ընկած Նպատական կամ Ջողա լեռներով, ապա դեպի արևմուտք Կորդվաց լեռներով և Բաղեշ ու նրա վտակ Գյոզալդարա գետերի ջրբաժանով:

XI դ. կեսերին Վասպուրականի կատապանությանը միացվում է Տարոնի կատապանությունը: Այս նոր ռազմավարչական կազմավորման գլուխ է կանգնում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Կեչառիսի մի արձանագրությունում (1051 կամ 1054 թթ.) նա իրեն տալիս է Վասպուրականի և Տարոնի «կիտանիտին» տիտղոսը, որը համապատասխանում է բյուզանդական «կիտոնիտին»: Գագիկ Բ-ին ուղղված մի ուղերձում նա իրեն անվանում է «Վասպուրականի եւ Տարոնյ եւ Մանազկերտի, Արձիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մօնումախին մագիստրոս, վեստ եւ տուկ»⁶:

1055 թ. Տարոնը հիշատակվում է որպես առանձին վարչական միավոր՝ Վասպուրականի կառավարիչ Ահարոնի որդի Թեոդորոսի գլխավորությամբ⁷, սակայն չի բացառվում, որ նա ենթարկվում էր միավորված թեմի դուկ Գրիգոր Մագիստրոսին:

Կայսրությանն անցան նաև 1000 թ. խեղդամահ արված⁸ Տայքի կուրապաղատ Դավթի հողերը: Լսելով Դավթի մահվան լուրը, Վասիլ Բ-ն «...փութանակի յառաջեաց գալ յաշխարհս մեր:...եւ զամենայն բերդս եւ զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով՝ զհաւատարիմս կարգեալ ի նոսա»⁹: Ստեփանոս Ասողիկի վկայությամբ կայսրը հասնում է Բագրևանդ և «բանակի ի դաշտին մերձ ի քաղաքն Վաղարշակերտ: ...զնաց

¹ Տե՛ս Արутյոնովա-Փիդանյան Բ., Փեմա Բասպուրական (территориальный состав), էջ, 98:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 111, Իբն ալ-Ասիր, էջ 212:

⁴ Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 212:

⁵ Яхья Антиохийский, Летопись, СПб., 1883, стр 62.

⁶ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», ի լոյս ընծայեց Կ.Կոստանեանց, Աղեքսանդրոպոլ, 1910, էջ 213:

⁷ Տե՛ս «Պատմութիւն Արիստակէայ Լաստիվերտոյոյ», Վենետիկ, 1901, էջ 87:

⁸ Տե՛ս Մատթեոս Ուռշախեցի, էջ 46

⁹ Տե՛ս Ասողիկ, 267, 270:

ի քաղաքն Ուխթեաց»¹: Փաստորեն կայսրը իրեն էր ենթարկել Դավթի հողերը՝ հասնելով մինչև կյուրապաղատության հյուսիս-արևելքում ընկած Ուխթիս քաղաքը: Այդ մասին վկայություն ունի նաև Արիստակես Լաստիվերցին²:

Ըստ վրացական աղբյուրների՝ Դավիթ կյուրապաղատը տիրում էր Տայքին, Բասենին, Կողին, Արտահանին, Ջավախքին. «Եվ Կասիլ արքան սկսեց հետաանդել նրանց: ...Եվ դաշն կնքելով...սկզբում նախապես շնորհած բերդերը դատարկելով հանձնեց, սկզբում հանձնած բերդերին ևս տասնչորս ավելացնելով, ինչպես նաև Դավիթ կյուրապաղատին Տայքում, Բասենում, Կոլ-Արտահանում (Կող-Արտահանում) և Ջավախքում պատկանող երկրները»³:

Կոստանդին Ծիրանածինն ունի այսպիսի վկայություն. «Իբերիայի կուրապաղատին...: կուրապաղատին են ենթարկվում չորս այլ իշխանություններ, որոնց դիմում են հետևյալ կերպ. Վերիասախի իշխանին, Իբերիա: Կարանատայսի իշխանին, Իբերիա: Կուելի իշխանին, Իբերիա: Ացարայի իշխանին, Իբերիա»⁴: Այստեղ հիշատակվող Իբերիան՝ Վիրքն է, Վերիասախը՝ «Վերին աշխարհ վրաց»-ը Սցխեթա կենտրոնով, Կարանատայսը՝ Տայքը, Կուելը՝ Ջավախքն է, որի կենտրոնը Ղվելի կամ Ղվելիս-Ցիխե ամրոցն է, որը թարգմանաբար նշանակում է Պանրաբերդ⁵: Ացարան նույնանուն է Աճարային⁶: Այսպիսով Դավիթն իշխում էր Տայքում, այն է Օլթիի ավազանում, Արդահանում, Ջավախքում: Դավթին էր պատկանում նաև Բասեն գավառի հյուսիսային մասը: Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ Վասիլ Բ-ն ցանկանալով ստանալ Տայքի կյուրապաղատ Դավթի օգնությունը՝ խոստանում է «տալ նմա զԽաղտոյառիճ Կղէտուրան, զՉորմայրի և զԿարին, զԲասեն և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս, զորս և ետ իսկ, որպէսզի զօր առաքեսցէ յօգնականութիւն նմա»⁷: Երեք տարվա ներքին կռիվներն ավարտվում են ապստամբների պարտությամբ: Կայերական բանակի հաղթանակին իր նպաստն էր բերել նաև Դավիթ կյուրապաղատը: Կայսրը սակայն, Դավթին տվել էր ոչ թե այդ գավառները այլ դրանք գրավելու իրավունքը. «Բասենն արդեն պատկանում էր Տայքին և Բյուզանդիան միայն ճանաչեց դա, մյուսները՝ Խաղտոյառիճը և Չորմայրին, ամենայն հավանականությամբ, գտնվում էին նրա սյուզերենության ներքո, երրորդները՝ Հարքն ու Ապահունիքը, դեռ պետք էր գրավել Մրվանյաններից: Առայժմ Դավիթը կարող էր ստանալ միայն Կարին-Թեոդոսուպոլիսը»⁸: Հիշյալ տարածքներին տիրելուց հետո Տայքի կյուրապաղատության տարածքը հասնում է մինչև Խնուսի դաշտի հյուսիսը եզերող Բյուրակնի լեռներ, իսկ Մրվանյան Բատ ամիրայի մահից հետո (990 թ.) Դավիթը գրավում է նաև Մանազկերտը⁹: Տայքի կյուրապաղատության տարածքից կայսրությունը կազմավորեց Իբերիայի կատապանությունը: Պատմաբանները տարակարծիք են Իբերիա կատապանության կազմավորման տարեթվի վերաբերյալ. «Իբերիա բանակաթեմը երևան եկավ ոչ թե 1001 թ., այլ XI դարի 20-ական թթ.: ...Մինչ այդ Տայքն ամենայն հավանականությամբ չէր հանդիսանում առանձին վարչատարածքային միավոր կայսրության կազմում, այն միացած էր հարևան բյուզանդական թեմերին և այն կառավարում էր հարևան թեմերի կատեպանը կամ ստրատեգը»¹⁰: Ինչպես գրում է Հ. Բարթիկյանը. «Տայքի դերը բարձրացավ Բյուզանդիային Վասպուրականի միացումից հետո: Շիրակի Բագրատունիների թագավորությունը Վասպուրականի և Տայքի կողմից վերցվեց օղակի մեջ: Հենց այդ հանգամանքն էլ հանգեցրեց Իբերիա թեմի ծնունդին, որը Վասպուրականի հետ պետք է կատարեր Բագրատունիների թագավորության գերեզ-

¹ Տե՛ս Ասողիկ, էջ 268-270:

² Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 11:

³ Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Լ. Մկրտումյանի, «ԼՀԳ», 1989, № 9, էջ 81:

⁴ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 151:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 312:

⁶ Տե՛ս Արնոց Ն., Երկեր, հ. Ե, «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ», Ե., 2012, էջ 386:

⁷ Տե՛ս Ասողիկ, էջ 180:

⁸ Степаненко В., Апахуник в Византийско-Таоских отношениях в период мятежа Вапды Склира /976-979/, «Античная древность и средние века», вып. 10, 1973, с. 223.

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ .Бартикян Р., О феме Иверия, ВОН АН Арм ССР, 19746 № 12, с. 71

մանափորի դերը»¹: Կատապանության տարածքից դուրս էին մնացել Արտահանը, Ջավախքը, Շավշքը, որոնք ամենայն հավանականությամբ Վասիլ Բ-ի կողմից տրվել էին Բագարատ Գ-ին (980-1014), երբ նրանք հանդիպել էին Հավճիչուն²: Այդ մասին է խոսում այն իրողությունը, որ վերջինիս մահից հետո Վասիլը նրա որդուց՝ Գեորգի Ա-ից (1014-1027) պահանջեց վերադարձնել այդ հողերը. «տու՛ր զիմ՝ հայրենիքն՝ զոր կիրապաղատն ինձ տուեալ է...»³, որը և որոշ դիմադրությունից և կռիվներից հետո համաձայնեց. «...և թագաւորին իշխանս ի վերայ գաւառին կացուցեալ, բաժանեն տուն առ տուն և գեղ առ գեղ և ագարակ առ ագարակ, որպէս յառաջինսն լեալ էր»⁴: Այս մասին գրում է նաև Հովհաննես Սկիլիցեսը. «Դավիթ կուրապաղատի եղբոր Գեորգիոսին՝ ներքնագույն Իբերիայի իշխանին համոզեց իր սեփական տիրույթներով բավարարվել և աչք չունենալ ուրիշի [ունեցվածքին], նրա հետ դաշինք կնքեց»⁵: Պետք է ենթադրել, որ Ներքնագույն Իբերիան բուն Վիրքն է, իսկ Տայքը Վերին Իբերիան է՝ կուրապաղատի տիրույթը: Դավիթ կուրապաղատին Ուռհայեցին անվանում է վրաց իշխան⁶: Վրաց Անանուն հեղինակը Բագրատ Դ-ի (1027-1072թթ) մասին գրում է, որ վերջինս «տիրեց իր ողջ հայրենիքը և թագավորությունը՝ Վերին և Ներքին երկրները»⁷: 1059թ-ին բյուզանդական ֆեոդալ Եվստաթիոս Բոյիլասի կտակում հիշատակվող գյուղերը հիմնականում տեղադրվում են Կղարջքում, ավելի որոշակի՝ Արտանուջի շրջանում⁸: Ամենայն հավանականությամբ հենց այս գյուղերն էին, որոնք Վասիլ Բ կայսեր ու Վրաց թագավոր Գեորգի Բ -ի միջև 1023թ-ի կնքված պայմանագրով անցան Բյուզանդիայի ձեռքը: Ինչպես գրում է Յահյա Անտոքացին, նահանջող Գեորգի Բ-ի զորքերին հետապնդելով կայսերական զորքերը հասնում են մի գետի, որը նրանց չի հաջողվում անցնել և ավերում ու կողոպտում են մինչև այդ գետն ընկած տարածքը: Այդ գետը կարող էր լինել Ճորոխը: Կարելի է ենթադրել, որ կայսրությունն ի վերջո տեր դարձավ Դավթի ժառանգությանը մինչև Արտանուջ: Այսպիսով մինչև 1045 թ. կատապանության սահմանները կարող ենք անցկացնել հետևյալ բնագծով. հյուսիս-արևմուտքում և արևմուտքում բյուզանդական Դերջան և Խաղտիք բանակաթեմերից բաժանվում էր Պարխարյան լեռներով, ապա Ճորոխի ձախակողմյան վտակներից մեկով, այնուհետև դեպի արևմուտք սահմանն անցնում էր Չորմայրի գագաթից դեպի արևմուտք ձգվող Ճորոխի լեռներով, թեքվելով հարավ սահմանն անցնում էր Խաղտյաց (Սկյուդիսես) լեռներով, հատելով Եփրատը սահմանը թեքվում էր արևելք և անցնում Գայլախագուտ լեռներով, ապա նորից թեքվելով հարավ անցնում էր Մեղեդուխքի լեռներով: Հարավում Իբերիայի կատապանության հողերը Տարոնի կատապանությունից բաժանվում էին Բյուրակնի լեռներից սկիզբ առնող և Խնուսի դաշտը հյուսիսից եզերող մի լեռնաձյուղով, հարավ-արևելքում Անի-Շիրակի թագավորությունից բաժանվում էր Տուարածաջուր և Դալառ գետերի ջրբաժանով, իսկ արևելքում Կարսի թագավորությունից՝ Երասխի աջակողմյան վտակ Բասեն գետով, այնուհետև Բասեն գետի գետախառնուրդից մինչև Երասխի ձախակողմյան վտակ Կարասու (Խանիչայ) գետի գետախառնուրդը սահմանն անցնում էր Երասխ գետով, ապա Կարասու գետով, Մեծրաց ու Կարմիր Փորակ լեռներով, իսկ հյուսիս-արևելքում վրաց թագավորության հետ սահմանը կարող էր հասնել մինչև Արտանուջ ու Ճորոխ գետի ստորին հոսանքի շրջան⁹: Բագրատունիների կենտրոնական՝ Անի-Շիրակի թագավորությունն արդեն շրջափակված էր: Բյուզանդացիներն այն գրավեցին 1045 թ.: Անի-Շիրակի թագավորությանը միացվեց Իբերիա բանակաթեմի տարածքը. «Բագրատունիների

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս В.Арутюнова-Фиданян, Из истории суверо-восточных пограничных областей Византийской империи в XI веке, «ՊԲՀ», 1972, № 1, стр 93.

³ Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 26:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 75:

⁶ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 43:

⁷ Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 82:

⁸ Տե՛ս Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059թ) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, «Բանբեր մատենադարանի», № 5, Երեւան, 1960, էջ 401:

⁹ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, Ե., 2004:

թագավորությունը Բյուզանդիայի համար բոլոր առումներով (տարածքային, ռազմական, ստրատեգիական, տնտեսական) ավելի բարձր էր կանգնած, քան Իբերիան, որը եթե մինչև 1045 թ. կայսրության համար, որպես սահմանային մարզ ուներ նշանակություն, ապա Անի-Շիրակի միացումից հետո կորցրեց այդ նշանակությունը: Ավելի մեծ դեր սկսեց խաղալ Բագրատունիների թագավորությունը»¹: Այսպիսով այս երկու միավորներից կազմավորվեց Հայաստանի և Իբերիայի կատապանությունը:

Եթե Հովհաննես Սկիլիցեսը Իասիտիսին (Ասիտ) անվանում է Իբերիայի կատապան², իսկ Արիստակես Լաստիվերցին՝ արևելյան կողմի (իմա՝ Իբերիայի) կուսակալ³, ապա այս միավորումից հետո աղբյուրներում նա արդեն անվանվում է «տեղակալ քաղաքին Անույ»⁴: Այդ վկայությունը ցույց է տալիս, որ Ասիտը Անի-Շիրակի կուսակալն էր, իսկ Անին՝ բանակաթեմի կենտրոնը: Հայկական աղբյուրներում այս բանակաթեմը ուղղակի կոչվում է Հայաստան: Այսպես օրինակ, Ասիտից «ի տէրութեանն Հայոց» (ի տէրութեանն Հայոց-ը այլ հոլովով է, նախադասությունը շարահյուսական ճիշտ ձևի է պետք բերել)⁵ անցնում է Կատակալոն Կեկավմենոսին (ըստ Արիստակես Լաստիվերցու՝ Կամենաս): Բասենի դաշտում տեղի ունեցած ճակատամարտի (1048թ) մասին խոսելիս, նույնպես պատմիչը Կեկավմենոս-Կամենասի մասին ասում է, որ նա. «ունէր զիշխանութիւն տանն Հայոց», իսկ Ահարոն Բուլղարը՝ «ունէր զկողմն Կասպուրականի»⁶: Այսպիսով, եթե բյուզանդական աղբյուրներում այս կուսակալությունը կոչվում է Հայաստանի և Իբերիայի կատապանություն, ապա հայկական աղբյուրներում՝ Հայաստան: Նիկողայոս Մառը 1907, 1908, 1914 թթ. Անիում կատարած պեղումների ժամանակ գտել է 1059 թ. փորագրված մի հունարեն արձանագրություն, որում Հայաստանի և Իբերիայի կատապան է հիշատակվում Հովհաննես Մոնաստիրիոտեսը⁷:

Իբերիայի կատապանության տարածքի մեջ մտան նաև Կարսի թագավորության հողերը: Գագիկ Աբասյանը դրանք կայսրությանը հանձնեց 1065 թ.: XI դարի վրաց Անանուն հեղինակի «Դավիթ արքայից արքայի պատմությունը» երկում կարդում ենք. «Իսկ Գեորգը (Գեորգի Բ (1072-1089)) գնաց իր հայրենիք՝ Տայքը, ապա հասավ Բանա (ավան Տայքում-Վ.Ա.): Յեվ նույնպես նրա մոտ յեկավ արևելքի զորավար (զորվար) Գրիգոր Բակուրյանի վորդին, վորը տեր էր Ուղթաց (Ութիի), Կարնո քաղաքի և Կարսի և նրանք հույժ ուրախացան և հանդարտվեցին: Յեվ հանձնեց [Գրիգորը] Գեորգ թագավորին քաղաքաբերդն Կարսիու նրա շրջակա գավառը, ապա բաժանվեցին»⁸: Այս կարևոր տեղեկությունը ցույց է տալիս, որ XI դարի 70-ական թթ. Իբերիա թեմը կազմված էր Վանանդի թագավորությունից, Կարինից, Հարավային Տայքից (Օլթի), որոնք էլ Գրիգոր Բակուրիանը հանձնեց վրաց թագավոր Գեորգի Բ-ին: Այսպիսով կատապանության սահմաններն արևելքում հասնում են մինչև Ջավախքի, Բագումի, Սևանա լիճը հյուսիս-արևելքից և արևմուտքից եզերող Արեգունու և Գեղամա լեռներ:

Այսպիսով Բյուզանդական կայսրության Հայաստանում 949-1045 թթ. գավթած տարածքներում կազմավորված Տարոնի, Կասպուրականի և Հայաստանի ու Իբերիայի կատապանությունների ընդհանուր սահմանները ձգվում էին հյուսիսում մինչև Պարխարյան, հարավում՝ Հայկական Տավրոս և Կորդվաց, արևելքում՝ Կոհ-ի-Նիհորական, Կասպուրականի, Գեղամա, Արեգունու, Բագումի և Ջավախքի, իսկ արևմուտքում՝ Խաղտյաց, Մեղեդուխքի, Սուրբ լույսի լեռներ և Մուզուր գետի միջին ու ստորին հոսանքի շրջան: 1074 թ. այս հողերն ընկան սելջուկ-թուրքերի ձեռքը:

¹ Бартикан Р., О феме Иверия, ВОН АН Арм ССР, 19746 № 12, с. 75

² Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 121:

³ Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 52:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 53, Հովհաննես Սկիլիցես, էջ 149:

⁵ Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 53:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 70:

⁷ Տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Կրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, էջ 395

⁸ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Անանուն (XII դ.), «Դավիթ արքայից արքայի պատմությունը», Լ. Մելիքսեթ-Բեկ, մատենաշար, Գիրք Ա, Ե., 2013, էջ 216:

Вардигер Абраамян, Уточнения территории и границ административно-территориальных единиц на территории Армении завоеванных Византией X-XI вв.,-Из территорий захвативших в Армении в 949-1045 гг византийская империя сформировала катапанства Тарон, Васпуракан, Армения и Иверия. Общая граница этих единиц на севере достигала до Пархарских гор а на юге до Армянского Тавра и до хребта Кордвац. На востоке граница проходила по хребтам Кох-и-нихоракан, Васпуракан, Гегамский, Арегунийский, Базумский и Джавахетский. Западную границу составляли горы Хахтяц, Мехедухки у Сурбулуйси

1074 году эти земли захватили турки-сельджуки.

Ключевые слова: катапан, кюралат, Византия, Тарон, Тайк, Васпуракан, Иверия, территория, граница.

Varditer Abrahamyan, Clarifications of borders and administrative subdivisions formed in the Armenian territories conquered by Byzantine Empire in X-XI centuries,- In his occupied territories in Armenia the Byzantine Empire constructed Taron's, Vaspurakan's, Armenia's and Iberia's katapanutyuns. Their mutual and general borders were stretching at the North up to the Parkharian, at mountains, the South up to the Armenian Tavros and Kordvats mountains, at the East up to the Kohi-Nikhorakan, Vaspurakan's, Geghama's, Areguni's, Javakhk's mountain chains. In 1074 these territories were occupied by seljuk turks.

Keywords: katapan, kyurapaghat, Byzantine, Taron, Taik, Vaspurakan, Iberia, territory, border.